



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳԼԽԱՎՈՐ ՓԱՐՏՈՒՂԱՐ

0010, Վազգեն Սարգսյան 3/8, հեռ. 594015

Էլ. ֆոստ suren.galstyan@justice.am

N _____

< ___ > _____ 20 թ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ
ԵՎ ՄԱՐՄԻՆԵՐՈՒՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴՆԵՐԻ ԽՄԲԻ ՆԱԽԱԳԱՀ
ՏԻԿԻՆ ՀԱՄՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ**

Հարգելի՛ տիկին Հարությունյան,

Ի պատասխան Ձեր՝ 2020 թվականի օգոստոսի 25-ի թիվ 20-51 գրությամբ ՀՀ արդարադատության նախարարություն ներկայացված հրատապ հաշիվաբանության՝ հայտնում եմ հետևյալը.

2020 թվականի օգոստոսի 23-ին՝ ժամը 09:00-ի սահմաններում, ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ֆրեակատարողական հիմնարկի թիվ 4-րդ պատժախցում արգելված իրերի առկայության և դրանց օգտագործման վերաբերյալ ստացված օպերատիվ տվյալների խնդրանքը ստուգելու նպատակով, ՀՀ ԱՆ ֆրեակատարողական ծառայության երեք աշխատակիցներ նույն խցում կազմակերպել և իրականացրել են չնախատեսված խուզարկություն, որի ընթացքում մեկ գույգ անլար ականջակալ հայտնաբերելուց և առգրավվելուց հետո խցում պահվող երեք անձանցից երկուսը՝ Ա.Շ-ն և Հ.Շ-ն, դրսևորելով հակաիրավական վարքագիծ, սկսել են խոչընդոտել խուզարկության իրականացմանը՝ ստեղծելով լարված իրավիճակ, ինչի պատճառով հնարավոր չի եղել խուզարկությունն ավարտին հասցնել:

Իրավիճակից ելնելով՝ նույն օրը՝ ժամը 10:30-ի սահմաններում, նույն խցում երկրորդ անգամ չնախատեսված խուզարկություն է իրականացվել 11 ֆրեակատարողական ծառայողների կողմից, որի շրջանակներում անձնական խուզարկության են ենթարկվել նաև խցում պահվող երեք անձինք՝ Ա.Շ-ն, Հ.Շ-ն և Ա. Խ-Ն:

Քանի որ երկրորդ խուզարկության ընթացքում Ա.Շ-ն և Հ.Շ-ն կրկին շարունակել են դրսևորել հակաիրավական վարքագիծ, ֆրեակատարողական ծառայողները նրանց մի ֆանի անգամ բացատրել են իրենց հակաիրավական գործողությունների անթույլատրելիության մասին և նախազգուշացրել, որ դրանք

չդադարեցնելու դեպքում նրանց նկատմամբ օրենսդրականորեն սահմանված կարգով կիրառվի ֆիզիկական ուժ և հատուկ միջոցներ, սակայն նշված անձինք, անտեսելով քրեակատարողական ծառայողների օրինական պահանջները և բազմաթիվ նախազգուշացումները, շարունակել են դրսևորել հակաիրավական վարքագիծ:

ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայողները, ևս մեկ անգամ դատապարտյալներին նախազգուշացնելով հակաիրավական գործողությունները չդադարեցնելու դեպքում ֆիզիկական ուժ և հատուկ միջոցներ կիրառելու ծագած անհրաժեշտության մասին, բավարար ժամանակ են տրամադրել վերջիններս դադարեցնելու հակաիրավական գործողությունները:

Նկատի ունենալով, որ բացատրական աշխատանքները դրական արդյունք չեն տվել և խցում պահվող անձինք շարունակել են իրենց հակաիրավական գործողությունները, քրեակատարողական հինգ ծառայողների կողմից Ա.Շ-ի և Հ.Շ-ի նկատմամբ կիրառվել է ֆիզիկական ուժ և հատուկ միջոցներ, ինչի արդյունքում հնարավոր է եղել հանդարտեցնել նրանց: Այնուհետև, իրականացվել է խցի խուզարկություն, որի ընթացքում արգելված այլ իրեր և առարկաներ չեն հայտնաբերվել:

Նշված խուզարկությունների տևողությունները չեն արձանագրվել, քանի որ գործող օրենսդրությամբ նման պահանջ նախատեսված չէ:

Հասկանալի է, որ 2020թ. օգոստոսի 23-ը եղել է հանգստյան օր, բացի այդ, այլ խցերում արգելված իրեր պահելու և օգտագործելու վերաբերյալ օպերատիվ տեղեկություններ չեն եղել, ուստի, նշված օրը բացի ՀՀ ԱՆ «Նուբարաբեն» քրեակատարողական հիմնարկի թիվ 4 քս պատժախցից ու այդ խցում պահվող անձանցից, այլ խցերում չնախատեսված խուզարկություններ չեն իրականացվել և այլ անձինք չեն ենթարկվել անձնական խուզարկության:

Փաստի առթիվ ՀՀ ԱՆ «Նուբարաբեն» քրեակատարողական հիմնարկում նախապարաստվել են նյութեր, որոնք 2020թ. օգոստոսի 25-ի թիվ Ե40/18-10-3349 գրությամբ ուղարկվել են Էրեբունի և Նուբարաբեն վարչական շրջանների դատախազություն:

Անդրադառնալով Ա.Շ.-ին և Հ.Շ-ին բժշկական օգնության տրամադրմանը՝ հարկ է նշել հետևյալը.

Ա.Շ-ն 23.08.2020թ-ին ժամը 11.00-ի սահմաններում զննության է ենթարկվել «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ ՊՈԱԿ)՝ ՀՀ ԱՆ «Նուբարաբեն» քրեակատարողական հիմնարկում տեղակայված բժշկական ստորաբաժանման (այսուհետ՝ Ստորաբաժանում) ղեկավարի կողմից: Ցուցաբերվել է առաջին բուժօգնություն:

Նույն օրը ժամը 12.30-ի սահմաններում ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալի կողմից կատարվել է Ա.Շ-ի ընդունելություն՝ վնասվածքների պատճառները պարզելու և բժշկական օգնություն կազմակերպելու նպատակով: Կալանավորված անձը նշել է, որ ընկել է իր խցում: Ա.Շ-ի արտաքին զննության արդյունքներն արձանագրվել են մարմնական վնասվածքների համապատասխան մատյանում:

23.08.2020-ին ժամը 11.00-ի սահմաններում Ստորաբաժանման ղեկավարի կողմից զննության

է ենթարկվել նաև Հ.Շ-ն: Ցուցաբերվել է առաջին բուժօգնություն:

Նույն օրը ժամը 12.30-ի սահմաններում ՊՈԱԿ-ի սնօրենի տեղակալի կողմից կատարվել է Հ.Շ-ի ընդունելություն՝ վնասվածքների պատճառները պարզելու և բժշկական օգնություն կազմակերպելու նպատակով: Կալանավորված անձը նշել է, որ ընկել է իր խցում: Հ.Շ-ի արտաքին զննության արդյունքներն արձանագրվել են մարմնական վնասվածքների համապատասխան մատյանում:

Հատկանշական է, որ Հ.Շ-ի և Ա.Շ-ի ընդունելության ժամանակ, վերջիններիս է ներկայացվել ՀՀ արդարադատության նախարարի 2020թ. հունվարի 14-ի թիվ 10-՝ հրամանով հաստատված՝ խոշտանգման և վատ վերաբերմունքի այլ ձևերի հետ կապված բժշկական հետազոտությունների իրականացման և դեպքերի արձանագրման ձևով փաստաթուղթ, որից վերջիններս կտրականապես հրաժարվել են:

Միևնույն ժամանակ, խնդրում են ընդունել ի գիտություն, որ նախկինում Հ.Շ-ի և Ա.Շ-ի վերաբերյալ տրված տեղեկանքների ամսաթվի անհամապատասխանելիությունն աշխատանքային ծանրաբեռնվածությամբ պայմանավորված տպագրական վրիպակ է: Կատարված միջամտության, ցուցաբերված բժշկական օգնության և արձանագրված վնասվածքների իրական ամսաթիվը համարվում է 23.08.2020թ-ը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ,

X

ՍՈՒՐԵՆ ԳԱԼՍՅԱՆ

Կատարող՝ Միլա Խուրավերյան
Քրեական օրենսդրության, քրեակատարողական
և պրոբացիայի ոլորտի բազմակնություն
մեակման վարչություն
Հեռ. 594-156